## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/20 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/20 պայմանագրում 2020 թվականի հունվարի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | Աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգման անհրաժեշտություն: |
| Փոփոխության նկարագրություն | Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով: |
| Փոփոխության հիմնավորում | Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 17.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/20 գնման պայմանագրի

ք. Երևան 16.01.2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Հունանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 17.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/20 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին

ա) Պայմանագրի N 1 հավելվածի բոլոր տեղերում <<91>> թիվը փոխարինել <<121>> թվով:

բ) Պայմանագրի N 1.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027670
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ՝**

<<ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ>> ՍՊԸ
ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470100309110000
ՀՎՀՀ 02700688

Տնօրեն՝

________ Մ. Հունանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված*
*17.10 2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/20 պայմանագրի*
*16 .01.2020թ. կնքված N1 համաձայնագրի*

*<<Հավելված N 1.1*
*17.10.2019թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/20 պայմանագրի*

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

**ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման**

| Հ.հ | ՆՆՓ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը | Շաբաթների քանակը (ընդամենը 121 օրացուցային օր) | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| 1 | Ելակետային նյութերի հավաքագրում | ■ | ■ | ■ | ■ | | | | | | | | | | | | | | |
| 2 | Հողատարածքների գեոդեզիական աշխատանքների իրականացում և հանույթների պատրաստում | ■ | ■ | ■ | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների (իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ | | | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | | | | | | | | | |
| 4 | Համաձայնեցված հատակագծային լուծումների հիման վրա ՃՀԱ ստանալու դիմումի համար անհրաժեշտ ԷՍՔԻԶԱՅԻՆ առաջարկի նյութերի լրակազմի պատրաստում՝ ներառյալ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, հրդեհաշիջման և կոյուղու հաշվարկային հզորությունների տրամադրում | | | | | ■ | ■ | ■ | | | | | | | | | | | |
| 5 | Անհրաժեշտության դեպքում ստացված ՃՀԱ-ին ճարտարապետաշինարարական լուծումների համապատասխանեցում | | | | | | | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | | | | | |
| 6 | Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ | | | | | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Արտաքին ինժեներական ենթակառուցվածքների մշակում ստացված տեխնիկական պայմանների հիման վրա և համաձայնեցում պատվիրատուի հետ | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8 | Աշխատանքային նախագծի լրակազմի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ՝ ներառյալ շինարարության կազմակերպման նախագիծը | | | | | | | | | | | | | | | | | | |
| 9 | Նախագծի լրակազմի քաղաքաշինական փորձաքննության իրականացում և դրական եզրակացության ստացում | | | | | | | | | | | | | | | | | | |
| 10 | Մշակված նախագծի հիման վրա նախահաշվի կազմում | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11 | Համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ և անհրաժեշտ եզրակացությունների ստացում | | | | | | | | | | | | | | | | | | |

>>

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027670
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ>> ՍՊԸ
ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470100309110000
ՀՎՀՀ 02700688

Տնօրեն՝

_________ Մ. Հովակյան
(ստորագրություն)